ԴԱՍ 1

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ – 6 ժամ

ԹԵՄԱՆ **1.** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: (1 ժամ):

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Ե. Չարենցի կենսագրության հիմնական դրվագները,
- ստեղծագործության ընդհանուր բնութագիրը,
- Ե. Չարենցի հիմնական գրքերի վերնագրերը և բանաստեղծական շարքերը,
- ինչի՞ համար է կարդում, ի՞նչն է կարևոր բնագրում նրա համար:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- ներկայացնել Չարենցի կենսագրության հիմնական դրվագները,
- զուգահեռներ անցկացնել Չարենցի հայրենի քաղաքի թողած ազդեցության և նրա ստեղծագործության հետ,

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Նախնական կազմակերպիչ», «Բազմանիստ», «Փոխներգործուն գրառումների համակարգ արդյունավետ կարդալու և մտածելու համար» (ՓԳՀԱԿՄՀ), «5-րոպեանոց շարադրանք»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: դասագիրք, քարտեր, գծապատկերներ, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգում են տնային առաջադրանքները և անցում կատարում նոր նյութի ուսուցմանը:

«Նախնական կազմակերպիչ» մեթոդը շատ արդյունավետ է խթանման փուլում սովորողների հետաքրքրությունը շարժելու համար: Մեթոդի էությունը հետևյալն է. սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու և հետաքրքրություն առաջացնելու նպատակով ուսուցիչը նախապես ընտրում է թեմայի հետ խիստ կապված և հեղինակի կյանքին նվիրված ու հետաքրքրաշարժ մի փաստ կամ դրվագ և ընթերցում,

կամ նկարների (կամ տեսաֆիլմի) դիտում է կազմակերպում, որից հետո անցկացնում է փոքրիկ քննարկում: Կամ էլ, օրինակ՝ գրատախտակին գրում ենք հարցեր թեմայի վերաբերյալ՝ ներառելով նաև նախորդ դասարաններում անցած ստեղծագործություններից: Հարց ենք ուղղում դասարանին. ո՞ր հարցերը չեն վերաբերում քննարկվող թեմային և ինչո՞ւ, ո՞րն է տարբերությունը: Երեխաները կպատասխանեն, որ դրանք տարբեր հեղինակների են վերաբերում, ստեղծագործությունները կառանձնացնեն ըստ հեղինակների:

Սովորողներին ակտիվացնելու և կենտրոնանացնելու նպատակով «Զարենց» բառով կատարում ենք «Բազմանիստ» վարժությունը:

«Բազմանիստ»-ը կարող է ունենալ հետևյալ տեսքը.



Վարժության ավարտից հետո սովորողներին առաջարկվում է բազմանիստի սկզբնաբառով և վերջնաբառով (Զարենց, բանաստեղծ) կազմել մեկ նախադասություն՝ այդ նպատակով նրանց տրամադրելով 1,5 րոպե ժամանակ: Աշակերտներից մի քանիսը կներկայացնեն իրենց կազմած

նախադասությունները: Շատ արդյունավետ կլինի, եթե դասի վերջում ուսուցիչը նորից անդրադառնա «Բազմանիստ»-ին:

Նախապատրաստելով աշակերտների մուտքը նոր նյութի մատուցմանը՝ ուսուցիչը սահուն կերպով անցնում է դասի հաջորդ փուլին:

Դասի այս փուլում սովորողները ինքնուրույն ուսումնասիրում են «Զարենցի կենսագրությունը, ստեղծագործության ընդհանուր պատկերը» ուսումնական նյութը՝ նոր տեղեկությունների և փաստերի ուսումնասիրության միջոցով: Դասի խթանման փուլում սովորողներին նոր նյութի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ արդեն հաղորդել ենք, իսկ այժմ դասագրքի համապատասխան նյութը հանձնարարում ենք ինքնուրույն կարդալ:

Այս փուլում ուսուցումը կարելի է կազմակերպել «Փոխներգործուն գրառումների համակարգ արդյունավետ կարդալու և մտածելու համար» (ՓԳՀԱԿՄՀ) մեթոդի կիրառմամբ: Սա իմաստի ընկալման փուլի արդյունավետ մեթոդ է, որն օգնում է աշակերտին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը: Այս մեթոդի էությունն այն է, որ կարդալիս տետրում կամ գրքի վրա մատիտով արվում է փոխգործուն գրառումներ՝ հետևյալ նշաններով.

V – գիտեմ

– – իմ իմացածին հակասում է

+ – նոր տեղեկություն է

? – անհասկանալի է, շփոթեցնող

! – հետաքրքիր է, կարելի է քննարկել

Սովորողներին հանձնարարում ենք անհատապես ընթերցել դասանյութը: Կարդալու ընթացքում հարկավոր է գրքի լուսանցքում մատիտով տեղադրել այդ նշանները՝ ըստ իրենց իմացության և պատկերացման: Կարիք չկա՝ բոլոր տողերում նշաններ անելու: Ընդհանուր առմամբ՝ այս գրառումները արտացոլում են տեքստի հետ սովորողի հարաբերությունները: Կարդալու ընթացքում արված նշումները ծառայում են որպես հարմար տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար: Ընթերցումից ստացված տեղեկությունը դասակարգելու համար աշակերտները կազմում են կատարած նշումների իրենց անհատական աղյուսակը՝ հետևյալ ձևով՝

V	-	+	?	!

Դասի յուրացումն ավարտելուց հետո, եթե կան «անհասկանալի է, շփոթեցնող, կամ հետաքրքիր է, կարելի է քննարկել» նշումները, ապա պետք է պարզաբանվեն այդ հարցերը՝ ելնելով նյութից, ու քննարկվեն՝ թեմայի ընկալումը լիարժեք դարձնելու նպատակով:

Կենսագրական և ակնարկային թեմաների ուսուցման ժամանակ սա հիանալի մեթոդ է: Սովորողները այնքան են խորամուխ լինում տեքստի մեջ, որ հենց դասարանում սովորում են նոր նյութը:

Քննարկման և մտքերի փոխանակման արդյունքում ուսուցիչը լրացնում է բացթողումները՝ ամբողջացնելով թեման:

Թեմայի յուրացումից հետո հանձնարարվում է գրել «5-րոպեանոց շարադրանք»՝ «Զարենցն իմ մտապատկերում» թեմայով՝ ելնելով նոր սովորած դասանյութից:

Աշխատանքներն ավարտելուց հետո սովորողները կարդում են իրենց շարադրանքները՝ մեկ անգամ ևս ամրապնդելով սովորածը: Վերջում ուսուցիչը ամփոփում է թեման՝ լրացուցիչ տեղեկություններ հաղորդելով Զարենցի կյանքի մասին:

Պետք է ներկայացնենք, որ Զարենցի կենսագրությունն արտակարգ հարուստ է և հետաքրքրական: Որպես մարդ ու բանաստեղծ՝ նա պետք է ներկայացվի կյանքի վառ, ցայտուն դրվագներով: Պետք է բացատրվի Սողոմոնյան–Զարենց ազգանվան փոփոխությունը, Կարսում ծնված լինելով, բայց ծնողների ծննդավայրը նկատի ունենալով՝ իրեն մակվեցի համարելու հարցը: Զարենցի մասնակցությունը կամավորական զինվորագրմանը: Նրա հայրենասիրությունը, Զարենցի հրատարակած գրքերը: Զարենցը պետք է ներկայացվի որպես նորագույն շրջանի հայ գրականության հիմնադիր՝ ուշադրության կենտրոնում պահելով թե՛ «Երեքի» դեկլարացիան, թե՛ «Նոյեմբեր» միությունը և թե՛ 1920-1930-ական թթ. նրա գործունեության հիմնական էջերը:

Աշակերտները պետք է հստակ պատկերացնեն, որ 1937 թվականի ողբերգությունը՝ մտավորականության ջարդով, մի նոր 1915 թվականի ապրիլի 24 էր: Այդ զոհերի մեջ էր նաև Չարենցը, ով ամենաանմխիթար պայմաններում, անգամ, իրեն պահեց հերոսաբար, ասպետի պես:

Աշակերտներին շատ կհետաքրքրեն նրա ընտանիքի և ձեռագրերի հետագա ճակատագրի հարցերը: Այդ կապակցությամբ նյութեր կարելի է քաղել Ե. Չարենցի կյանքի և ստեղծագործության մասին վերջին տարիներին լույս տեսած գրքերից և մամուլի հրապարակումներից:

Ե. Չարենցի կյանքը հետաքրքրական ներկայացնելու համար կարելի է օգտվել նրա մասին տպագրված հիշողությունների գրքերից. «Հիշողություններ Ե. Չարենցի մասին» (Ե., 1961), «Հուշեր Եղիշե Չարենցի մասին» (Ե., 1986), «Չարենցի հետ: Հուշեր» (մասն առաջին, Ե., 1997, մասն երկրորդ, Ե., 2008): Դասագրքում զետեղված են նաև Չարենցի մասին Գուրգեն Մահարու հուշերից հատվածները:

Կարելի է սովորողներին հանձնարարել կատարելու հետևյալ գործնական աշխատանքը: Չարենցի կյանքը լավ ուսումնասիրելու համար կարելի է ամբողջ դասարանով կազմել նրա կյանքի ու գործունեության համառոտ տարեգրությունը: Այդ նպատակով դասարանը կարելի է բաժանել չորս խմբի և հանձնարարել, որ խմբերից առաջինը զբաղվի 1897-1907 թթ. դեպքերի արձանագրումով, երկրորդը՝ 1908-1917 թթ., երրորդը՝ 1918-1927 թթ., չորրորդը՝ 1928-1937 թթ.: Աշխատանքների կատարման ժամանակը լրանալուց հետո այդ ամենը վերջում պետք է միավորել և դասարանում ունենալ աշակերտների ձեռքով կազմված Չարենցի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, ինչը նրանց մեծապես կօգնի յուրացնելու նյութը: Այսպիսով՝ Չարենցի կյանքը նրա ստեղծագործության հիմքն է:

Աշակերտին Չարենցի կյանքի և հարուստ ժառանգության մասին պատկերացում տալուց հետո պետք է հաջորդ դասին անցնել նոր դասավանդվող նյութին՝ «Հայրենիքում» բանաստեղծությանը:

Կատարվում է անդրադարձ:

Մինչ բանաստեղծությանն անցնելը, գրատախտակին գրում ենք Չարենցին բնութագրող շրջասույթներ և մեկնաբանում. Մեծ Կարսեցի, հայկական Բուալո, Հարդագողի ճամփորդ:

ԴԱՍ 2

ԹԵՄԱՆ 2. Եղիշե Չարենցի «Հայրենիքում» բանաստեղծությունը

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 բոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

իմանա՝

- ստեղծագործության ընդհանուր բնութագիրը,
- Ե. Չարենցի հիմնական գրքերի վերնագրերը և բանաստեղծական շարքերը,

կարողանա՝

- ընկալի տեքստի բովանդակությունը, բնագրում նկարագրված հայրենիքի հանդեպ սեր ունենա, ճանաչի հայրենի բնությունը,
- մարդկային ապրումի և հույզի, գեղեցիկի և անչյալի վերհուշի մասինվերաբերմունք արտահայտի,
- ունեցած գիտելիքները և փորձը կապի ընթերցանության տեքստի հետ,
- գիտակցի իր ազգային պատկանելության, հայրենի երկրի և մայրենի լեզվի կարևորության մասին,
- պատմելիս օգտագործի հեղինակային բառապաշարը,
- անվանի տեքստի գեղագիտական արժեքավոր տեղերը,
- գնահատի հեղինակի վարքագիծը և արտահայտել իր վերաբերմունքը,
- գնահատի բնագրի բառապաշարը և հարստացնի սեփական բառապաշարը,
- գտնի քարտեզում Ղարսը և կապի հեղինակի կենսագրության ու ստեղծագործության հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Նախնական կազմակերպիչ», «5-բոպեանոց շարադրանք», «Երեք բանալի, մեկ կողպեք», «Ամփոփիչ հարցեր»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, քարտեզ, նշագրիչ, A 1 չափսի թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Նոր նյութի յուրացման դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգվում են տնային առաջադրանքները՝ պարզաբանելու տնային առաջադրանքի յուրացման աստիճանը, որոշելու ստացած գիտելիքների ընդհանուր թերությունները և դրանց պատճառները, հնարավորինս վերացնելու բացահայտված թերությունները, և անցում ենք կատարում նոր նյութի ուսուցմանը:

Այս փուլում կիրառում ենք «Նախնական կազմակերպիչ» մեթոդական հնար: Այս մեթոդը շատ արդյունավետ է խթանման փուլում սովորողների հետաքրքրությունը շարժելու համար: Մեթոդի էությունը հետևյալն է.

սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու և հետաքրքրություն առաջացնելու նպատակով ուսուցիչը նախապես դուրս է գրում թեմայի հետ առնչվող մի քանի բառ կամ հասկացություն, ապա գրատախտակին կամ ցուցապաստառին նախապես գրում է «Հայրենիքում» բանաստեղծության հետ առնչվող մի քանի բառ (ծյունապատ լեռներ, կապույտ լճեր, երկինքներ՝ որպես երազներ հոգու, երկինքներ՝ նման մանկական աչքերի, լճի մեղմ ծփանք, որ նման է մրմունջի, կարոտի իրիկնամուտ, աստղային մութ) և առաջարկում սովորողներին մտածել, թե ինչ է կատարվելու այդ բառերի շրջանակում կամ ինչպես են իրար հետ կապվել այդ բառերը և դարձել բանաստեղծություն և սովորողներին կարելի է հանձնարարել ներկայացնել փոքրիկ շարադրանք (5-րոպեանոց շարադրանք)՝ նշված բառերով և բառակապակցություններով: Աշխատանքի համար սահմանված ժամանակը լրանալուց հետո մի քանի սովորող կարդում են իրենց շարադրանքները, կարող ենք նաև գնահատում կատարել և անցնել նոր նյութի ուսուցմանը:

Այնուհետև հանձնարարվում է քարտեզի վրա գտնել Չարենցի հայրենի քաղաքը՝ Կարսը, հանձնարարել, որ լրացուցիչ տեղեկություններ հավաքեն ժամանակաշրջանի և Չարենցի կյանքի մասին:

Ուսուցիչը կամ աշակերտներից մեկը արտահայտիչ կարդում է Ե. Չարենցի «Հայրենիքում» բանաստեղծությունը: Հարց ենք ուղղում դասարանին, օրինակ՝ ի՞նչ զույնի է բանաստեղծությունը, ինչո՞ւ ես այդպես կարծում՝ ապահովելով պատճառահետևանքային կապ և այլն:

Դասի այս փուլում դասարանը բաժանում ենք խմբերի և կիրառում «Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդը: Աշխատանքը կարելի է կատարել

զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք և՛ բավականին ծավալուն են, և՛ կարճառոտ են ու նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ ունեն: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն: Քանի որ բանաստեղծությունը բաղկացած է 3 տնից, հետևաբար աշխատանքը նպատակահարմար է կատարել զույգերով: Յուրաքանչյուր զույգի հանձնարարում ենք կարդալ բանաստեղծությունը, ապա հանձնարարում ենք քառատողերից դուրս գրել մեկական հենակետային, բանալի բառ, բառակապակցություն կամ նախադասություն և գետեղել բանալիների նկարի տակը կամ վրան: Պատկերը կլինի մոտավորապես այսպես՝

«Հայրենիքում»

Նկար 1

Նկար 2

Նկար 3



Նկար 4

Բանալի բառերը ընտրելուց ու բանալիների վրա հենակետային բառերը տեղադրելուց հետո ուսուցիչը հանձնարարում է կազմել կողպեքը: Երեխաները նկարում են կողպեքը, և յուրաքանչյուր խումբ, ըստ իր դուրս գրած բանալի բառերի և ըստ իր ընկալման, ձևակերպում է գրվածքի գաղափարը՝ բանաստեղծության արտահայտած իմաստը:

Աշխատանքներն ավարտելուց հետո զույգերը ներկայացնում են իրենց գրածները, ապա կատարվում է քննարկում ու մտքերի փոխանակում:

Խմբերից մեկն էլ ներկայացնում է, որ այս բանաստեղծությունը գետեղված է Չարենցի «Տեսիլաժամեր» (1915) շարքում («Տեսիլաժամեր», այսինքն՝ տեսիլքի ժամեր, տեսիլքներ տեսնելու ժամեր):

Ապա տեղեկացնում եք, որ թեմատիկայով, նպատակադրումով, բնույթով, գրական սեռով, բովանդակությամբ կամ այլ հատկանիշներով իրար հետ կապված բանաստեղծությունների որոշակի քանակություն, ամբողջություն և այլ հատկանիշներով իրար հետ միակցված տպագիր ամբողջությունը կոչվում է բանաստեղծական շարք:

Երեխաները մեկնաբանում են, որ հեղինակի երևակայության մեջ հայտնվում է հայրենի երկիրը՝ ձյունապատ լեռներով, կապույտ լճերով, մանկական անմեղ աչքերի նման մաքուր երկնքով, մրմունջի նմանվող լիճը՝ իր մեղմ ծփանքով:

Զույգերից մյուսն էլ ավելացնում է, որ այդ անաղարտ բնության մեջ, սակայն, բանաստեղծը մենակ է հայրենի բնաշխարհում, բայց նրա հետ է սիրած աղջկա տեսիլքը, և կարդում է համապատասխան տողը:

Հաջորդ զույգը պարզաբանում է, որ այդ տեսիլքը, անշուշտ, այստեղ բանաստեղծի սիրած աղջկա կերպարով է ներկայանում: Այդ վառ տեսիլքն է, որ հեղինակի մեջ արթնացնում է հին սուրբ անուրջի՝ հայրենի անապական բնության ու եզերքների անհուն կարոտը, որ, թվում է, թե աստղային է ու հավերժական:

Սովորողներից մեկն էլ եզրափակում է խոսքը՝ ասելով, թե բանաստեղծության ճնարական հերոսը կարոտած ու թախիծով ծյունոտ լեռներում կանչում է սիրած աղջկան: Սակայն իջնում է գիշերը, որը նրա հոգուն բերում է «կարոտի իրիկնամուտ»՝ խառնելով բանաստեղծի հոգին աստղային մութի հետ:

Մենք սովորեցնում ենք սովորել երեխաներին, ինքնուրույնաբար եզրահանգումներ կատարել, ստեղծարարական կարողություններ ձեռք բերել, նպաստել նրանց հաղորդակցական հմտությունների զարգացմանը:

Ապա ուսուցիչն ամփոփում է թեման՝ լրացուցիչ տեղեկություններ տալով:

Եթե դասի իմաստի ընկալման փուլում աշակերտները պետք է հետազոտեին նյութի բովանդակությունը և յուրացնեին թեման, ապա այս փուլում պետք է իմանան, թե ինչպես կարելի է կիրառել դասի ընթացքում ստացած գիտելիքը գործնականորեն:

Այս գործընթացը արդյունավետ կազմակերպելու նպատակով ուսուցիչը դասարանը բաժանում է 5 խմբի և յուրաքանչյուր խմբի տալիս է հետևյալ բովանդակության առաջադրանքներ՝ կապված բնագրի հետ:

1. Ո՞րն է կոչվում բանաստեղծական շարք և ո՞ր շարքում է զետեղված «Հայրենիքում» բանաստեղծությունը:
2. Ի՞նչ պատկերներով է Չարենցը ներկայացնում հայրենի երկիրը:
3. Հայրենի բնաշխարհում ո՞վ արթնացավ նրա տեսիլքի մեջ:
4. Ինչպիսի՞ նուրբ ակնարկներով է հիշում սիրած աղջկա գոյությունը:
5. Ինչպե՞ս է ավարտվում բանաստեղծությունը: Դուք ինչպե՞ս կավարտեիք այն:

Տրվում է 10 րոպե ժամանակ աշխատանքը կատարելու համար: Երբ առաջադրանքների կատարումը ավարտում են, ուսուցիչը նրանց կարդալ է տալիս իրենց գրածները, որից հետո կազմակերպում է մտքերի փոխանակում:

Ապա հանձնարարվում է անհատական աշխատանք՝ հետևյալ առաջադրանքներով.

1. Բանաստեղծությունից դուրս գրեք 8 ածական, 12 գոյական:

Օրինակ՝ գոյական–լեռ, ...

Ածական-կապույտ, ...

2. Ինչի՞ մասին է բանաստեղծությունը, ո՞ր տրամադրությունն է գերակշռում: Պատաս- խա՛նդ հիմնավորիր:

Ինչպես դասի սկզբից, այնպես էլ հիմա, կատարվում է գնահատում՝ միավորային, իսկ խմբային աշխատանքը կարելի կատարել նաև փոխադարձ գնահատումով՝ պատճառաբանելով:

Հանձնարարվում է տնային աշխատանք՝ հանգամանորեն բացատրելով:

1. Բնության այս պատկերը կապի՛ր թեմայի հետ և գրի՛ր շարադրություն՝ վերնագրելով:
2. Բանաստեղծությունը սովորի՛ր անգիր, ձայնագրիր, տեղադրիր դասարանի կամ բլոգում:

Դասի ամենակարևոր փուլերը անդրադարձն է, որ գրեթե չի կատարվում: Անդրադարձը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզելու ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի ձեռքբերումները և բացթողումները, դժվարություններն ու խոչընդոտները և իրավիճակի վերլուծությունից հետո մշակելու գործողություններ՝ առաջացած այդ թերությունները, բացթողումները հաջորդ դասին շտկելու նպատակով:

Այնուհետև առաջարկվում է պատասխանել այն հարցերին, որոնք գրվում են գրատախտակին, այդ թվում՝ էլեկտրոնային կամ քարտերի վրա. «Ո՞ր հարցն է եղել ամենաբարդը: Այդ հարցի մասին գրելիս ի՞նչ զգացումներ ես ունեցել: Արդյոք դու բացահայտեցի՞ր մի տեսակետ, որը քեզ համար անակնկալ դարձավ: Ի՞նչն ես լավ հասկացել: Ի՞նչն ես վատ հասկացել»:

Եթե ժամանակ մնում է, ապա կարելի է լսել այս հարցերի պատասխանները, իսկ եթե ոչ, ապա հաջորդ դասին կքննարկվի:

ԴԱՍ 3-4

ԹԵՄԱՆ՝ Ե. Չարենցի «Տաղարան» շարքի ընդհանուր բնութագիրը, բանաստեղծական շարք. «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը (2 ժամ):

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 90 բոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

իմանա՝

- բանաստեղծության բովանդակությունը և գաղափարը
- գաղափար կազմի բանաստեղծական շարքի մասին
- անվանի Ե. Չարենցի բանաստեղծական շարքերի և հիմնական գրքերի վերնագրերը:

կարողանա՝

- ընկալի և ներկայացնի «Տաղարան» շարքում ընդգրկված ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը,
- ընթերցի բանաստեղծությունը առոգանությամբ (ինքնուրույն կամ ուսուցչի ուղղորդմամբ),
- ներկայացնի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության բովանդակությունը արձակ շարադրանքով,
- ներկայացնի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության կառուցվածքը,
- արտահայտի կարծիք կարդացածի վերաբերյալ,
- հարցեր առաջադրի ընկալման ճշգրտման նպատակով,
- դուրս գրի բանաստեղծությունից դրական և բացասական իմաստ արտահայտող մակդիրները, գրավոր կամ բանավոր խոսք կազմի հեղինակային բառերով ,
- թեմայի միջոցով մշակի ու զարգացնի սեփական արժեհամակարգը,
- գիտակցել իր ազգային պատկանելության, մայրենի լեզվի անհրաժեշտության և կարևորության մասին, արտահայտի իր դիրքորոշումը դրա վերաբերյալ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Կարճ զրույց», «Կարճ դասախոսություն», «Խթանող հարցեր», «Ձնագնդի», «5-բոպեանոց շարադրանք»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, գծապատկերներ, նշագրիչ, լրացուցիչ ուսումնական նյութեր, թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դասի ժամանակ ուսուցիչը պետք է կարողանա բացահայտել նախատեսված աշխատանքի նպատակը, վերարտադրել առաջադրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ գիտելիքները, կարողությունները և հմտությունները, կատարել տարբեր վարժություններ և առաջադրանքներ, ստուգել կատարված աշխատանքները, բնաբրկել և ուղղել սխալները, անհրաժեշտության դեպքում հանձնարարել տնային առաջադրանք, ծանոթացնել նոր կարողությունների հետ, կատարել նոր կարողությունների ամրապնդմանը միտված վարժություններ, կատարել ստեղծարար բնույթի վարժանքներ, ամփոփել դասը, հանձնարարել տնային առաջադրանք:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգում են տնային առաջադրանքները (եթե հանձնարարված է) և անցում կատարում նոր նյութի ուսուցմանը:

Այս փուլում ուսուցիչը «Կարճ դասախոսության» միջոցով ներկայացնում է, որ Եղիշե Չարենցի «Տաղարան» շարքը, որը հեղինակն ավարտել է 1921 թվականին, դարձավ հեղինակի
այդ շրջանի գեղարվեստական ինքնատիպ արտահայտություններից մեկը, տպագրվեց 1922 թվականին՝ տեղ գտնելով մոսկովյան հրատարակության երկհատորյակի առաջին հատորում:

Ապա ավելացնում ենք, որ «Տաղարան» շարքը հեղինակը ձոնել է իր սիրելի կնոջը՝ Արփենիկին: Արփենիկին Չարենցը սիրել է յուրահատուկ սիրով: Բնավորությամբ նա եղել է մեղմ
ու սրտակից ընկեր, տխուր պահերին երգել է Չարենցի համար: Եվ, որ ամենակարևորն է, հասկացել բանաստեղծին, ներել նրա մոլորությունները, սիրային պատմությունները, կենցաղային և գրական վեճերը: Արփիկը հոգեկան նեցուկ է եղել Չարենցին և սատար կանգնել նրան մշտապես: Արփիկի մահը Չարենցը շատ ծանր է տարել:

Այդ սերը հետագայում շատ է ներշնչել բանաստեղծին: «Էպիֆական լուսաբացը»՝ «Նվիրում եմ գիրքս հիշատակին կնոջս, ընկերոջս, հերոսական բարեկամիս՝ Արփենիկ Չարենցին» ընծայագրով ձոնել է նրան: Ապա հավելում ենք, որ գրքում Արփենիկի հիշատակին նվիրված է նաև երկու սոնետ՝ «Իմ բարեկա՛մ, իմ սե՛ր, հերոսական ընկեր», «Մենք ապրեցինք քեզ հետ մի վիթխարի դարում»: Սրանից հետո ներկայացնում ենք, որ «Տաղարանն» սկսվում է այսպես.

Արփիկին՝

Հիդրս խոսի՛, մի՛ կենա խրոնվի պես,

Տալդա տրվիր, գեմիս տարար ծովի պես.

Կու մեռնիմ,— չիս տեսնի Սայաթ-Նովի պես...

(տալդա — ալիք, հորձանք, գեմի — նավակ):

Սայաթ-Նովա

Բառերի բացատրությունը տալուց հետո ավելացնում ենք, որ շարքի համար նախամուտք են հետևյալ երկու քառատողերը.

Ինչքա՞ն որ հուր կա իմ սրտում — բոլորը քեզ.
Ինչքա՞ն կրակ ու վառ խնդում — բոլորը քեզ.—
Բոլո՛ր ը տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝
Դո՛ւ չմրսես ձմռան ցրտում.— բոլո՛ր ը քեզ...

Ամռան անուշ, հուրհրատող տո՛թ ես, ջան,—
Նախշուն՝ նռան ու նարնջի հո՛տ ես, ջան,
Երբ խստադեմ ի՛նձ ես նայում դու հանկարծ —
Ասես սրտիս մահվան դաժան բո՛թ ես, ջան...

Ապա հարցեր ենք առաջադրում սովորողներին, ու նրանք էլ պատասխանում են՝

- Ո՞րն էր Չարենցի այս աշուղության, աշուղ դառնալու ներքին տրամաբանությունը:
- Ինչո՞ւ է Չարենցն իր «ապոլլոնյան քնարը» փոխարինում «աշուղի սազով»:
- Մի՞թե նոր ոճավորմամբ էր տարվել կամ ստեղծագործական նմանագրության նորարարություն էր:

Անշուշտ՝ ոչ:

Չարենցի ստեղծագործության այս նոր անակնկալը՝ «Տաղարանը», կյանքի ու աշխարհի նկատմամբ ժողովրդական հայացքի ամրապնդումն էր, որովհետև ժողովուրդն է, որ իր դարավոր փորձից ելնելով՝ հաստատում է հավիտենական արժեքները: Դառնալով տաղասաց-աշուղ՝ Չարենցն իրեն ստիպում է մտնել ժողովրդի բնական պարզության աշխարհը, այնտեղ որոնել կեցության պարզ հիմքերն ու աշխարհահիացման, մարդկային հարաբերությունների ու կյանքի մասին իմաստությունների ամբողջությունը:

Ապա տալիս ենք բացատրությունն այն հարցի, թե ինչո՞ւ է հեղինակը դիմել հենց Սայաթ-Նովային, այն Սայաթ-Նովային, ով Պարույր Սևակի բնորոշմամբ հայ գրականության «մեծ գանգատավորն էր ու բեզարածը: Այն Սայաթ-Նովան, ով հիանալով՝ բեզարեց և վերջիվերջո կանգնեց փակուղու առաջ և դատապարտվելով՝ հագավ կրոնավորի սքեմը:

Սրանք հարցեր են, ավելացնում ենք մենք, որոնց պատասխանը տալիս է «Տաղարանը»: Այստեղ Չարենցը ոչ թե նմանագրել է Սայաթ-Նովային, ոչ թե դիմել է գրչական ոճագրության, այլ ընդհակառակը՝ «սայաթնովյան երանգներով» շատ դեպքերում վիճում է միջնադարի երգչի հետ՝ նրա դառնությանը դեմ դնելով իր հոգու խենթ ազատությունն ու զվարթությունը, նրա բեզարածությանը դեմ է դնում վայելումի քաղցրությունը, իսկ հուսահատությանը՝ իր երբեք չմարող լավատեսությունը:

Քանի որ Չարենցը ոչ միայն ժամանակի մեծ բանաստեղծներից էր, այլ նաև գրականության զարգացման ընթացքին էր հետևում, հասկացավ, որ թարմություն է պետք տիրող ճգնաժամը հաղթահարելու համար, համենայնդեպս Չարենցն այդպես էր կարծում: Սայաթ-Նովային դիմելն ուներ նաև մի այլ խորհուրդ՝ Սայաթ-Նովան հայ ժողովրդի հպարտությունն է, միջնադարյան պոեզիայի վերջին ձայնը, նոր պոեզիայի մեծ ու արքայական սկիզբը: Սայաթ-Նովան ու իր երգերը պարտավորեցրել են նրա հետնորդներին գետնին չթողնել հայկական բառը աչքի լույսի պես պահպանել հայկական խոսվածքը, կյանքում միշտ բարձր դասել բարին, գեղեցիկն ու ազնիվը, գնահատել սիրո և բարեկամության մեծ ուժը: Եվ ահա Չարենցն իր առաջ խնդիր է դնում՝ սիրել Սայաթ-Նովայի պես, հերել ու հաստատել, վիճել ու խոնարհվել, պաշտել ու փառաբանել նրա բառամթերքով: Սայաթ-Նովան ոչ թե համանակվում, այլ վերամարմնավորվում է Չարենցի մոտ՝ մնալով Չարենցին հարազատ:

Ապա ամփոփելով մեր խոսքը՝ ասում ենք, որ «Տաղարանը» մի ամբողջական սյուժե է՝ սկզբով, ընթացքով, ավարտով, սյուժե, որտեղ գլխավոր հերոսը՝ Տաղասացը, պարզում է ընդհանրապես իր հարաբերություններն աշխարհի և այդ մեծության առանձին արժեքների հետ: Այն դառնում է մի համահավաք ամբողջություն, մի յուրահատուկ սիրավեպ աշխարհի հետ:

Սիրո, երազի, կարոտի, դառնության, գանգատի, բաժանման հակադիր զգացմունքներով ողողված այս շարքն իսկական հարստություն է հայ գրականության համար, անկրկնելի ու յուրահատուկ մի կոթող, Սայաթ-Նովայի խոսքով՝ Չարենցի ոգեղենությամբ ու հոգով ներկված իր միակ ու անկրկնելի սիրուն՝ Արփենիկին:

Հարցերով ամրապնդում ենք և անցում կատարում դասի շարունակությանը: «Խթանող հարցեր» մեթոդի կիրառմամբ երկրորդ խթանումն ենք կատարում: Մեթոդի էությունն այն է, որ ուսուցիչը նախապես պատրաստում է դասի նյութի հետ անմիջականորեն առնչվող հարցեր, որոնց պատասխանները զետեղված են դասի տեքստի մեջ: Այս մեթոդը կարող է կիրառվել համարյա բոլոր թեմաների ուսուցման ընթացքում: Նման ձևով վեր ենք հանում սովորողների նախնական գիտելիքները ուսուցանվող թեմայից: Ավարտելուց հետո անցնում ենք թեմայի ուսուցմանը:

Մինչև բուն դասի ուսուցման անցնելը, հավելում ենք, որ «Տաղարանը» ներառում է քսան բանաստեղծություն և ավարտվում է «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությամբ:

Ուսուցիչը պետք է հստակեցնի դասի բովանդակային նպատակները: Դասի ընթացքում ի՞նչ գիտելիքներ ենք ուզում հաղորդել սովորողներին: Անհրաժեշտ է իմանալ, որ բովանդակային նպատակը աշակերտների մոտ գիտելիքի ձևավորումն է, ակադեմիկական գիտելիքների հաղոր- դում (ճանաչողական և զարգացնող), ուսուցման դաստիարակչական բնույթը:

Ակադեմիական նպատակները կախված են առաջադրանքի կազմակերպման ձևից, թե որքանով է այն ենթադրում փոխօգնության, համագործակցության անհրաժեշտություն:

Սոցիալական հմտությունների ձևավորման, զարգացման նպատակը աշակերտների մոտ մյուսներին օգնելու և խմբի անդամներին խրախուսելու, արդյունավետ շփվելու, համագործակցելով՝ խնդիրներ լուծելու հմտությունների

ձեռքբերումն է: Ուսուցիչը մեկ դասի համար կարող է ընտրել մեկ կամ երկու հմտություն, որոնց ձևավորումը առավել հրատապ է համարում: Երբ արդեն հստակեցված են դասի ակադեմիական և սոցիալական նպատակները, անցում է կատարում նոր նյութի ուսուցմանը՝ աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելով: Դասի այս փուլում կիրառում ենք «Ջնաքնդի» մեթոդը:

Մեթոդի կիրառման նպատակը միմյանց հետ շփվելը, կարծիքներ փոխանակելը, խմբովին ընտրություն կատարելը, տեղեկույթ հավաքելը և խմբի գաղափարները, կարծիքները միասին արտահայտելն է:

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4-հոգիանոց խմբերի: Ապա կարդում է «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը: Սկզբում հանձնարարում է անհատական աշխատանք. յուրաքանչյուրն ինքնուրույն կարդում է բանաստեղծությունը՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- Ի՞նչ միտք է ծագեց ընթերցելիս:
- Գրե՛ք ձեր գաղափարների (կարծիքների) ցանկը այս պատմության վերաբերյալ» (4 բոպե):

Այնուհետև հանձնարարում ենք զույգեր կազմել և միմյանց ներկայացնել իրենց սեփական կարծիքները թեմայի վերաբերյալ: Ապա զույգով միասին ձևակերպում են երկուսի համար ընդհանուր 3-5 կարծիք, որոնք վերցված են իրենց անհատական կարծիքների ցանկից: Պետք է դրանք գրել թղթին կամ թղթապաստառին (6 բոպե):

Երկուական 2-հոգիանոց խմբերը միանում են և կազմում 4-հոգիանոց մեծ խմբեր: Խմբերը ներկայացնում են իրենց կարծիքները, պարզում նմանությունները և տարբերությունները (ընթացքում նրանք կարող են ավելացնել նաև նոր կարծիքներ): 4-հոգիանոց խմբերի ներսում զույգերով ներկայացնում են իրենց գրած կարծիքները և խմբավորելով՝ ներկայացնում են նոր ձևակերպած 4 ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար: Խումբը գրում է դրանք առանձին թղթապաստառի վրա (8 բոպե):

Այստեղ շատ կարևոր է, թե արդյոք բոլո՞ր մասնակցեցին քննարկմանը 4-հոգիանոց խմբով աշխատելիս:

Հնարը յուրաքանչյուր մասնակցին խմբում ներգրավելու միջոց է: Յուրաքանչյուր անհատ հաշվետու է՝ ստեղծելու, ձևափոխելու, համեմատելու, լսելու և ներկայացնելու համար: Միևնույն ժամանակ պետք է հետևենք խմբերի դեմ առ դեմ փոխազդեցությանը և անհրաժեշտության դեպքում մասնակիցների ուշադրությունը պետք է հրավիրել դրա վրա, հատկապես՝ 4-հոգիանոց խմբերում: Բոլորի համար ակնհայտ է դառնում, որ ամենադժվարը 8-հոգիանոց խմբով աշխատելն էր, ուստի, արդյունավետությունը հաշվի առնելով, պետք է աշխատել 4-հոգիանոց խմբերով: Հանձնարարում ենք թղթապաստառները փակցնել դասարանի տեսանելի պատին և յուրաքանչյուրը ներկայացնում է իր խմբի աշխատանքը:

Առաջին խումբը ներկայացնում է, որ բանաստեղծությունը նվիրված է Հայաստանին, հայ ժողովրդին, իր հայրենիքին, որտեղ երևում է Չարենցի հայրենասեր, ձգտող ու հպարտ ոգին: Եղիշե Չարենցը սիրում է մեր երկինքը մուգ, սիրում ու պաշտում է իր ողբանվագ լարը, նահիրյան աղջիկների հեզաճկուն պարը, բուքը, խրճիթները.... ամեն, ամեն ինչ:

Մյուս խումբը ներկայացնում է, որ իրենք սիրում են այս բանաստեղծությունը ոչ միայն գեղեցիկ բառերի ու արտահայտությունների համար, այլ սիրում են բանաստեղծությունը Չարենցի մտքի, այսքան շատ սիրո, մարդկանց մեջ պայքարելու ցանկություն ստեղծելու համար, մեր բնության գովերգության համար: «Ես իմ անուշ...» բանաստեղծության մեջ հայրենի բնության կողքին փառաբանված են նաև հայոց լեզուն, երաժշտությունը և գրականությունը՝ հանձինս Քուչակի և Նարեկացու:

Երրորդ խումբը, այնուամենայնիվ, «Ես իմ անուշ...»-ը ընկալել և մեկնաբանել է՝ որպես գովք Հայաստանի: Բանաստեղծության առաջին երեք տներում ծվացող դառնանուշ խոհերը, աստիճանական կուտակումով, վերջին տան մեջ փոխարկվում են ոգևորության հորձանքի, որն իր գագաթնակետին է հասնում վերջին տողում՝ Որպես անհաս փառքի ճամփա, ես իմ Մասիս սարն եմ սիրում: Ահա հենց այս ոգևորությունն է, որ տարածվում և իր տիրական շնչով վարակում է ամբողջ բանաստեղծությունը՝ վեհացնելով ու վսեմացնելով նախորդ տողերի և առանձին բառերի մեջ խտացված տառապանքն ու վիշտը:

Խմբերից մյուսն էլ ներկայացնում է, թե ինչ է ասել Վիլյամ Սարոյանն այս բանաստեղծության մասին. «Չարե՛նցը, Չարե՛նցը... «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...»: Անոր չհանդիպած՝ գիտեի արդեն իր այս բերթվածը: Սկսած էի արտասանել Ամերիկայի մեջ: Ամեն մեկ բառ բացատրել տված էի ու գրեթե զոց սորված: Զայն մինչև այսօր կնկատեմ մեր երկրին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը: «Հայր մեր»-ին նմանվող աղոթք մը»:

Մյուս խումբն էլ եզրափակում է թեման՝ ասելով, որ ինչպես արդեն ասվել է, Չարենցի շարքը բաղկացած է 20 տողից: Տաղը միջնադարյան բանաստեղծության ընդհանուր բնորոշումն է, որ այստեղ ստացել է Սայաթ-Նովային բնորոշ աշուղական ձև: Շարքի 1-18-րդ տողերն ունեն սիրային բովանդակություն: Չարենցը երգում է գոզալի կերպարանքով հարություն առած իր բարձր սերը, որն այդպես էլ մնում է անհասանելի: Վերջին երկու տողերն ունեն հայրենասի- բական բովանդակություն: Կնոջ անմատչելի սիրուց նա հասնում է հայրենիքի անփոխարինելի ու բացառիկ սիրո գովերգությանը, որի ամփոփումն է դառնում «Ես իմ անուշ Հայաստանի» բա- նաստեղծությունը:

Բանաստեղծության բովանդակությունը ներկայացնելուց հետո հանձնարարում ենք բնագրից դուրս գրել դրական և բացասական իմաստ արտահայտող մակդիրները:

Հանձնարարվում է այս փուլի աշխատանքը:

· Ինչո՞վ է արտահայտվում բանաստեղծության գեղագիտական հաշակը:

Ներկայացնել դրական ու բացասական իմաստով գործածված մակդիրները:

Դասարանը բաժանվում է 2 մեծ խմբի, մեկ խմբին հանձնարարվում է բնագրից դուրս գրել բացասական իմաստ արտահայտող մակդիրները, մյուս խմբին՝ դրական:

Ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները:

Խմբերից մեկը ներկայացնում է իրենց առաջադրանքը: Որպես առաջին հարցի պատասխան՝ բավական է առանձնացնել բանաստեղծության մակդիրները, որոնք հիմնական դեր են կատարում ընդհանուր կառուցվածքի մեջ: Դրանք կարելի է բաժանել իմաստային երկու խմբի ՝ դրական և բացասական լիցքերով հակադիր խմբերի:

Դրական իմաստ արտահայտող մակդիրներն են՝ արևահամ, վառման, հեզաճկուն, մուգ, ջինջ, լուսե, վսեմ, հազարամյա, աղոթք դարձած, լուսապսակ, ճերմակ, անհաս փառքի ճամփա:

Ապա ավելացնում են, որ թվով 24 մակդիրներից 12-ը, ինչպես տեսնում ենք, կարելի է համարել դրական, իսկ 12-ը՝ բացասական:

Այսպիսով՝ զարմանալիորեն հավասարակշռությունը պահված է:

Մյուս խումբը ներկայացնում է, որ թվով 12 բացասական նշանակության մակդիրներն կան բնագրում: Դրանք են՝ ողբանվագ, լացակումած, արնանման, վիշապածայն, մթում կորած, անհայրընկալ, սև, ողբածայն, արյունաֆամ, որբ, արնավառ: Բայց հարկավոր է տեսնել և զգալ, որ այստեղ որոշիչը ոչ այնքան բանակական հավասարությունն է, այլ օգտագործված մակդիրների լիցքային բեռնվածությունը, որը զգալիորեն ծանր է կշռում բացասական կողմի վրա:

Այստեղ միջամտում է ուսուցիչը՝ ասելով, որ հարկավոր է կատարել նաև մի երկրորդ բաժանում՝ ըստ բնութագրվող առարկաների: Այս առումով էլ այստեղ մակդիրները բաժանվում են երկու խմբի՝ բնության մակդիրներ և պատմամշակութային մակդիրներ:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ դասդասում են աղյուսակում՝

ա) Բնության մակդիրներ, թվով՝ 8 (6 դրական, 2 բացասական),

բ) Պատմամշակութային մակդիրներ, թվով՝ 16 (6 դրական, 10 բացասական):

Ապա ուսուցիչը պարզաբանում է, որ այս վերջին 10 ուժեղ մակդիրներն էլ ոչ միայն թույլ չեն տալիս «Ես իմ անուշ...»-ը Հայաստանի գովքը համարվի, այլև բանաստեղծությունը ավելի շուտ մոտեցնում են ողբերգի: Մթում կորած խրճիթները, ողբածայն երգերը և արյունաֆամ վերքերը կարելի է սիրել, բայց փառաբանել՝ ո՛չ: Ավելի ճիշտ, սա ազգի ողբերգական պատմությանն է ներկայացնում...

Ուսուցիչն իր ամփոփիչ խոսքում ներկայացնում է, որ «Տաղարան» շարքը յուրահատուկ տեղ է գրավում Չարենցի ստեղծագործության մեջ, քանի որ այստեղ նա կիրառել է գեղարվեստական մի այնպիսի հնարանք, ինչպիսին ոճավորումն է (բացատրված է դասագրքում): Ոճավորման ակունքը Սայաթ-Նովայի խաղերն են: Չարենցը, նախ, կենդանացնում է Սայաթ-Նովայի կերպարը, որը հայտնվում է նրա երազում, ապա՝ գոգալի կերպարը: Միջնադարի մթնոլորտ ստեղծելու նպատակով ընտրում է Սայաթ-Նովայի խաղերին համապատասխան ձևը (մուխամազ, գազել), համապատասխան լեզու, համապատասխան միջավայր, որը Թիֆլիսն է, Հավլաբարի հայաբնակ թաղը:

Աշակերտը նաև պետք է հստակ իմանա, որ «Տաղարան» շարքն ունի որոշակի դիպաշար. սիրահարը պատրաստ է ամեն ինչի, միայն թե արժանանա գոգալի սիրուն, բայց՝ ապարդյուն: Ահա հոգեբանական զարգացման

այս գագաթնակետին ծնվում է «Էլի գարուն կգա, կբացվի վարդը» տաղը, որ Չարենցի խոհն է կյանքի անցողիկության մասին: Այս տաղն, ինչպես հարկն է, իմաստավորելու և Սայաթ-Նովայի հետ առնչությունները ցույց տալու նպատակով ցանկալի է դասարանում կարդալ Սայաթ-Նովայի «Մե խոսք ունիմ իլթիմազով» խաղը և ցույց տալ պատկերային այն ընդհանրությունը, որ կա երկու գործերի միջև:

Աշխարհից հեղացած, գոգալի անտարբերությունից խռոված և շրջապատի կողմից չհասկացված ցաված հոգու երգն են ներկայացնում երկու հեղինակները:

Այստեղ ուսուցիչը պետք է առավել մեծ ուշադրություն դարձնի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տաղի բացատրության վրա: Կարդալուց հետո ցանկալի է ներկայացնել կարծիքներ այդ տաղի մասին (Մ. Սարյան, Վ. Սարոյան, Ա. Իսահակյան):

Անհրաժեշտ է, որպեսզի աշակերտը գիտակցի, որ գոգալի սիրո մերժումն ստանալուց հետո, ինչն անցավոր սեր է, Չարենցն անցնում է հայրենիքի անանց ու հավերժական սիրուն: Ահա դրանց արտահայտությունն են շարքի 19-րդ («Հայաստանին») և 20-րդ («Ես իմ անուշ Հայաստանի...») տաղերը: Այստեղ Չարենցը կենդանացնում է ամբողջ Հայոց աշխարհը՝ իր լեզվով, բնապատկերով, պատմությամբ ու Արարատի խորհրդանիշով:

Աշակերտը պետք է գիտակցի «արևահամ բառ»-ի իմաստը: Դրա համար նրան անհրաժեշտ է ներկայացնել Հովհաննեսի Ավետարանի առաջին տողերը. «Ի սկզբանե էր Բանն, և Բանն էր առ Աստված, և Աստված էր Բանն»: Նշանակում է՝ «Սկզբում Խոսքն էր, և Խոսքը Աստծունն էր, և Աստված Խոսք էր»: Աստված խոսք էր: Ահա Չարենցն իր տաղն սկսում է, ինչպես Հովհաննես ավետարանիչը: Պետք է «բառ» լիներ, որպեսզի գեղարվեստական պատկերը ներքուստ զարգանալով հասներ ողբածայն երգի, երկաթագիր գրքի, Նարեկացու ու Քուչակի:

Չարենցի «արևահամ բառ» երբեմն տպագրվում է «բար» ձևով:

Այս կապակցությամբ պետք է իմանալ հետևյալը:

Չարենցի այս տաղը 1922-ին տպագրվել է նրա մոսկովյան երկհատորյակի մեջ «արևահամ բառ» ձևով: Նույն թվականին տեղ է գտել Հարություն Սուրխաթյանի կազմած «Գրական գոհարներ»-ի մեջ: 1927 թ. գրականագետ Սիմոն Հակոբյանն այն զետեղել է իր կազմած «Կարմիր արև» դասագրքում, որտեղ տպագրվել է «բար» ձևով: Սա կամ ակնհայտ վրիպակ է, կամ դասագիրք կազմողը ցանկացել է գիտակցված ձևով Չարենցին փրկել նրան հասցեագրվող ազգայնամոլի պիտակից:

Համոզվելու համար, որ «բար» ձևը սխալ է, պետք է նշել, որ 1928 թ. այդ տաղը թարգմանաբար տպագրվել է ռուս բանաստեղծ Վ. Սուտիրինի «Անդրկովկասի գրականության ակնարկներ» գրքում «արևահամ բառ» ձևով: «Արևահամ բառ»-ն առկա է նաև 1936 թ. գերմաներեն թարգմանության մեջ (թարգմանիչ՝ Վաչե Աբեղյան): Անտեղի չէ նշել նաև այն փաստը, որ 1942 թ. Հակոբ Օշականը «բառ» ձևով այդ բանաստեղծությունը ներգրավել է իր կազմած «Հայ գրականություն» դասագրքի մեջ:

Զարենցի այս տաղը կարելի է զուգադրել Վահան Թեքեյանի «Տաղ հայերեն լեզուին» (1913) բանաստեղծության հետ և կատարել բառապատկերային, կառուցվածքային վերլուծություն՝ ցույց տալու, որ Թեքեյանն ասում էր. «Մրգաստանի մը նման կը սիրեմ քեզ, Հայ լեզու», իսկ Զարենցը՝ «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում»:

Համեմատության համար պետք է ներկայացնել Վահան Թեքեյանի «Տաղ հայերեն լեզուին» գործը՝ նմանությունները գտնելու համար:

Վերստին պետք է ասել ու ամրապնդել ասածը՝ Զարենցը գրում է «արևահամ բառ»՝ դրանով ակնարկելով Հովհաննեսի Ավետարանը, որը բացվում է այդ տողերով: Այսինքն՝ ամեն ինչի սկիզբը բառն է, խոսքն է, որ իր մեջ հոգի է կրում:

Պիտի բառ լիներ, որ Զարենցը հասներ ողբաձայն երգերի, երկաթագիր գրքերի, Նարեկացու ու Քուչակի նման լուսավոր անունների, հակառակ դեպքում Նարեկացուն ու Քուչակին կփոխարինեին մրգի՝ բարի (պտուղի) տեսակները՝ դեղձ, խաղող, սալոր, տանձ ու խնձոր:

Բանաստեղծությունն անհրաժեշտ է ենթարկել նաև տաղաչափական ու պատկերային վերլուծությունների:

Պետք է բացատրել, որ այն գրված է արաբական միջնադարյան պոեզիային բնորոշ մուխամազի ձևով: Մուխամազ եզրույթը արաբերենից թարգմանաբար նշանակում է հնգապատկված: Սայաթ-Նովայի կիրառած հիմնական ձևն է, աչքի է ընկնում տների հանգավորման, կիսատողերի կամ բառերի կրկնությունների, ներքին հանգի առկայության յուրահատկություններով՝ լեզվական ճոխությամբ:

Ուսուցիչը պետք է բացատրի, որ Զարենցի տաղն ունի «եմ սիրում» տողավերջյան կրկնությունը, ինչը հանդիպում է առաջին տան 1-ին, 2-րդ, 4-րդ և մնացած տների 4-րդ տողերում:

Դրան նախորդում են հարուստ հնչեղություն ունեցող հանգեր:

Հնչեղ հանգերով կրկնվող բառեր կան նաև այլ տներում. «երգերը մեր», «գրքերը մեր», «վերքերը մեր» և «հեքիաթ չկա», «ճակատ չկա», «գագաթ չկա»:

Անհրաժեշտ է առանձնացնել մակդիրները, համեմատությունները, որոնք լեզվական ճոխություն են հաղորդում տաղին՝ «արևահամ բառ» և այլն :

Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տաղը գեղարվեստական մտածողության թե՛ ամբողջական համակարգով, թե՛ առանձին մանրամասներով մխրճված է հայ ժողովրդի պատմամշակութային գոյաբանության մեջ: Այն համապարփակ ու ընդգրկուն երկ է, որ ի մի է բերում հայ ժողովրդի ծագումնաբանական-ժառանգորդական տոհմիկ հատկանիշերը և ստեղծում ազգային տեսակի միասնական անաղարտ պատկերը: Դա և՛ ազգային հոգեբանություն է, և՛ ազգային նկարագիր, և՛ ազգային ողբերգություն, և՛ հայրենի բնաշխարհ, որոնք գեղարվեստական խոսքի մեջ օղակում են առասպելաբանությունն ու պարզ իրատեսությունը:

Չարենցի տաղի բառապատկերային ատաղձն ունի և՛ հնագույն վիպական դյուցազներգական շերտեր, և՛ նորագույն: Հնագույնը տանում է դեպի դարերի խորքը՝ հայոց մատենագրություն, հայոց բնաշխարհին համապատասխանող հայոց բառարվեստ, պատմականորեն ձևավորված ազգային հոգեբանություն: Նորագույնն առնչվում է Չարենցի ժամանակակից հայ պոեզիայի երկու Վահաններին՝ Տերյանին ու Թեքեյանին:

Չարենցը թեև 24 տարեկան էր, բայց արդեն ժամանակի պոեզիայի գլխավոր դեմքն էր, այս գլուխգործոցի հեղինակը, ինչը հետագայում Վիլյամ Սարոյանը պիտի բնորոշեր որպես մեր ազգային տերունական աղոթքը՝ «Հայ մեր»-ը, իսկ Մարտիրոս Սարյանը համարեր «բոլոր մասշտաբներից դուրս պանոն՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանի»:

Ամփոփելով՝ պետք է ասել, որ «Տաղարան» շարքի նախորդ գործերում մերժվելով գոգալի սիրուց՝ Չարենցը հասնում է հայրենիքի սիրուն: Դա բարձրագույն ու անանց, անդավաճան ու միակ սերն է և, ինչպես ամեն մի սեր, պահանջում է զոհողություն, հարկ եղած դեպքում՝ անձնազոհություն, որին Չարենցը մշտապես պատրաստ է եղել:

«Ես իմ անուշ Հայաստանի...»-ն աշխարհն ի մի բերող ուժն է, ամեն ինչից անսահման վեր միակ պատգամը, որ ժողովրդի պատմության արշալույսից, սերունդների մաքառումների ու արյան գնով շնորհված է մարդուն: Բանաստեղծի սիրո խոստովանությունը վերածվում է հայրենիքի փառաբանության: Ամբողջ տաղը Հայաստանի ոգեղեն պատմության գեղարվես- տական խտացումն է, որ, սկսվելով «արևահամ բառից», հասնում է մինչև «երկաթագիր գրքերը» և այդ բառի ու գրքի բարձրագույն աստիճանը՝ Նարեկացի ու Քուչակ: Դրան հաջորդում է Արարատը՝ որպես ազգային բացարձակ արժեք, որ վաղուց վերածվել է Հայաստանի խորհրդանշանի. «Աշխարհ անցի՛ր, Արարատի նման հերմակ գագաթ չկա, // Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում»:

Սրբազան լեռը Չարենցը հիշում է կրկնակի անուններով՝ Արարատ և Մասիս, փառաբանում նրա գագաթի հերմակությունը, որ նշանակում է թե՛ բարձրություն, թե՛ անարատ մաքրություն: Այդ հատկանիշերն ազգային ոգու խտացվածք լինելու հետ մեկտեղ այն դարձնում են անհասանելի: Իսկ քանի որ բանաստեղծի համար անհասանելիության չափանիշը գրական մնայուն փառքն է, ուստի այստեղ Արարատը դառնում է անհաս փառքի ճամփա:

«Անհաս» մակդիրը կարող է իմաստավորվել նաև կրկնակի բովանդակությամբ: «Անհաս» նաև այն պատճառաբանությամբ, ըստ որի՝ Արարատը, թանկ ու բաղձալի լինելով հանդերձ, գերված է, ինչպես ինքը կասեր, «դարավոր ոսոխի կողմից»: Եվ ինչքան էլ ցանկանաս հասնել նրան, իրականում չես կարող: Կարող ես միայն մտովի:

Աշակերտին պետք է բացահայտել Արարատի խորհուրդը, որով ավարտվում է բանաստեղծությունը:

ԴԱՍ 5

ԹԵՄԱՆ՝ «Տաղ անձնական» բանաստեղծությունը:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

իմանա՝

- Չարենց–բանաստեղծի կերպարը ժամանակի մեջ,
- ո՞րն է բանաստեղծության ասելիքը,
- ըմբռնի Չարենցի համար անփոխարինելի և բարձրագույն սիրո՝ հայրենի ծննդավայրի անմառանալիության գաղափարը:
- Չարենցի ցավը Հայոց ցեղասպանությունից հետո:

կարողանա՝

- ընկալի բանաստեղծի սրտի ցավը և մխիթարանքը՝ Կարինե Քոթանջյանին,
- ընկալի ստեղծագործության դաստիարակչության նշանակությունը,
- արտահայտի կարծիք կարդացածի վերաբերյալ,
- հարցեր առաջադրի ընկալման ճշգրտման նպատակով,
- դուրս գրի բանաստեղծությունից բարդ և ածանցավոր բառերը,
- կազմի նոր սովորած բառերով նախադասություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Կանխագուշակումներ՝ հենակետային բառերով ու արտահայտություններով», «Բացատրական ընթերցանություն», «Կրկնակի գրառումներով օրագիր», «5–րոպեանոց շարադրանք»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: դասագիրք, քարտեր, գծապատկերներ, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Համակցված դաս:

Համակցված դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝ (այս դասը ունենում է մեկ կամ մի քանի դիդակտիկ նպատակներ): Ուսուցիչը ստուգում է տնային առաջադրանքը, առաջադրում է դասի նպատակը, նախապատրաստում է աշակերտներին նոր նյութի ընկալմանը, այսինքն՝ դասի ընթացքում զարգացնում է սովորողների գիտելիքներն ու գործնական և մտավոր կարողությունները, աշակերտներին հանձնարարում է ուսումնասիրել նոր նյութը, անհրաժեշտության դեպքում տալիս է համապատասխան բացատրություններ, ապա ամրապնդում է տվյալ դասի ընթացքում ուսումնասիրած և

նորի հետ փոխկապակցված նախորդ նյութերը, ընդհանրացնում և համակարգում է գիտելիքները և կարողությունները, փոխկապակցում է նոր և նախկինում ստացված ու ձևավորված գիտելիքները, ամփոփել դասի արդյունքները, հանձնարարել տնային առաջադրանք, նախապատրաստում է (ոչ միշտ) նոր նյութի ուսումնասիրմանը (նախնական աշխատանք):

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգում ենք տնային առաջադրանքները, ամփոփում ենք դասը, գնահատում և անցում կատարում նոր նյութի ուսուցմանը:

Դասի այս փուլում օգտագործում ենք «Կանխագուշակումներ՝ հենակետային բառերով ու արտահայտություններով» մեթոդը: Գրատախտակին նախօրոք գրում ենք դասի վերնագիրը և Կարսը, այգին, հայրենի մով երկինքը, տապարով շինված բուր դեմքեր, դեպի երկինք գնալ, աստղային երազների ճանապարհ, անդարձ հեռանալ, օտար քաղաքների ճանապարհով, աղմկոտ աշխարհ, անհավասար մարդկային կյանք, սրտում բացված վերք, Կարսի փողոցներ, Զարենց, մնաս բարով չասած, Կարինե Քոթանճյան բառերն ու արտահայտությունները:

Աշակերտներին առաջարկում ենք կանխագուշակումներ անել բանաստեղծության բովանդակության վերաբերյալ, փոքրիկ պատմություն հորինել և գուշակել, թե ինչ կապ կարող է ունենալ Զարենցը Կարինե Քոթանճյանի հետ: Կարող են աշխատել զույգերով կամ համագործակցային փոքր խմբերով:

Աշակերտների գուշակությունները և փոքրիկ պատմությունները լսելուց հետո առաջադրում ենք կարդալ հղումը:

Բացատրությունը տալիս ենք բնագիրը կարդալուց հետո, երբ աշակերտներին ծանոթ կլինի այն:

Այս փուլում ընտրում ենք «Բացատրական ընթերցանություն» և «Կրկնակի գրառումներով օրագիր» մեթոդները:

Աշակերտներն ընթերցում են դասանյութը՝ զուգահեռ բացատրելով նորածանոթ բառերը, արտահայտությունները և կետադրությունը: Դժվարության դեպքում օգնում է ուսուցիչը:

Մով– մավի, կապույտ

Տապար– կացին, կացնի ձև ունեցող սառը զենքի տեսակ

Կարոտակեզ– կարոտից կիզվող՝ տոչորվող, կարոտավառ

Վտարանդի– տարագիր, պանդուխտ, հայրենիքից հեռացած և օտարության մեջ ապրող մարդ

Ամենտի եգերք– այլաշխարհային եգերք, իրականությունից դուրս այդպիսի երևակայական այլ աշխարհներ սիրում էին ստեղծել խորհրդապաշտական ուղղության գրողները:

Երկրորդ անգամ ընթերցելուց հետո ստեղծում ենք ճշված օրագիրը, որի համար աշակերտները թուղթն ուղղահայաց գծով բաժանում են երկու մասի: Ձախ կողմում գրում են բնագրի տպավորիչ հատվածները, իսկ աջ կողմում՝ ճշված յուրաքանչյուր հատվածի վերաբերյալ մեկնաբանություններ և բացատրում (Ինչի՞ մասին է այդ հատվածը: Ի՞նչ է հիշեցնում այն: Ինչո՞ւ է այդ հատվածը կարևորում): Օրինակ՝

Կրկնակի գրառումներով օրագիր

Բնագրի տպավորիչ հատվածները	Հատվածի վերաբերյալ մեկնաբանությունները և բացատրությունը
Եվ Կարինե Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով Ա՛նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:	Գրվել է 1917 թ.՝ Մոսկվայում: Նվիրել է իր մտերմուհի Կարինե Քոթանճյանին: Պատերազմի սարսափների միջով անցած բանաստեղծը վերադարձել է Կարս, սակայն շուտով պիտի հեռանար հայրենի քաղաքից և հրաժեշտ տար իր համար այնքան թանկ ու հարազատ վայրերին ու մարդկանց, սիրած աղջկան: Զարենցին հուզում էր հայրենիքի բախտը, իր ցավը Հայոց Ցեղասպանությունից հետո, որը առնչվում էր իր կենսափորձի և կյանքի հետ: Զարենցը հեռանում է Կարսից՝ չուզենալով: Նրան օտար էր քաղաքը, շուրջը բոլորը աղմկում էին, իսկ նա քայլում էր և չէր արժանանում փոքրիկ ուշադրության անգամ:

Դեմքերը, ա՜խ, բուք են այնպես՝ կարծես շինված են տապարով:	Եղիշե Չարենցը տեսավ մարդկանց բուք և անհաղորդ դեմքերը և նրա համար շատ դժվար էր շարունակել ապրելը իր ծննդավայրում: Այդ պատճառով նա թողեց իր ծննդավայրը և իր սիրած էակին, որին նույնիսկ «մնաս բարով» չասաց: Նա պիտի լքի իր ծննդավայրն ու օտար ճամփաներով պիտի գնա դեպի իր երազները, երազանքները: Ինձ թվում է, որ այդ ժամանակ Չարենցի կողքին ոչ ոք չի եղել, ոչ ոք չի հասկացելել նրա մտածմունքները: Այդ պատճառով նա ուզում է գնալ իր երազանքների հետևից, իր աստղային երազների ճանապարհով և այլն:

Այս աշխատանքն ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրեն մեկնաբանությունները, ապա կատարվում է քննարկում ու մտքերի փոխանակում:

Մեկ անգամ ևս աշակերտները կարդում են բանաստեղծությունը և դուրս են գրում բառակազմական նշանակության բառերը: Բառային աշխատանքի ժամանակ առաջադրում ենք բացատրել հայրենի, հազա՛ր-հազա՛ր, մարդկային, անհավասար, անտաշ, վերք, կյանք, կարոտակեզ, հաշմանդամ խելագար, հավիտյան, վտարանդի, դեպի, եզերք, աստղային, մեղքի, անդարձ բառերի կազմությունը և ուղղագրությունը: Մեկ անգամ ևս հիշում են, որ ըստ կազմության բառերը լինում են պարզ (արմատական), բարդ և ածանցավոր:

Ապա առաջարկում ենք «5-բոպեանոց շարադրանքի» մեթոդով ձևակերպել «Տաղ անձնականի» բովանդակությունը արձակ: Մոտավորապես կարելի է սպասել այսպիսի շարադրանքի. «Բանաստեղծության մեջ Չարենցը ասում է, որ լքում է իր ծննդավայրը, այգին ու տունը: Չարենցը, գրում է այն մասին, թե ինչպես է անցնում օտար քաղաքների ճանապարհներով, թե ինչ նոր իրավիճակների է հանդիպում, նոր մարդկություն հարաբերություններ տեսնում: Բանաստեղծության առաջին մասում Չարենցը նկարագրում է իր շրջապատը, իր ճանապարհը, իսկ երկրորդ մասում արդեն իր կարծիքն է արտահայտում այդ ամենի մասին: Չարենցը խոսում է իր հույզերի մասին, ասում է, որ ինչքան էլ աշխարհը ուրախ լինի, ինքը չի կարող ուրախանալ նրանց հետ, նա պիտի անցնի ու գնա իր երազանքների հետևից»:

Չարենցը բանաստեղծության մեջ նշում է նաև Կարինե Քոթանեյանի անունը՝ ում նվիրել էր այս բանաստեղծությունը, ում նա այդպես էլ չէր հասցրել հրաժեշտ տալ: Ապա ուսուցիչը կատարում է թեմայի ամփոփում՝ ասելով, որ Չարենցն այս բանաստեղծությունը վերնագրել է «Տաղ անձնական», «անձնական», որովհետև իր մասին է, «տաղ», որովհետև գրված է աշուղական տաղի ձևով, որը կոչվում է մուխամազ:

Այս տաղի մեջ Չարենցը ներկայացնում է բանաստեղծի իր կերպարը ժամանակի մեջ:

Կարսն իր հայրենի քաղաքն էր, Կարինե Քոթանեյանն իր սիրած աղջիկն էր, որին ձոնել է «Ծիածան» (1917) ժողովածուն՝ հետևյալ ուղերձով. «Դու իմ վերջի՛ն, իրիկնայի՜ն, աստղայի՜ն քույր...»: Կարինե Քոթանեյանը հետագայում հետաքրքրական հուշեր է գրել Չարենցի մասին:

Այս ձևը մեկ տարի անց նա կիրառում է «Տաղարան» շարքում:

Տաղի մեջ յուրահատուկ է տների հանգավորումը. առաջին տունը՝ աաաա, հաջորդ տները՝ բբբա, գգգա, դդդա: Այսինքն՝ առաջին տունը նույնահանգ է, հաջորդ տների առաջին երեք տողերն ունեն իրենց ինքնուրույն հանգային հնչեղությունդ, իսկ չորրորդ տողերում կրկնվում է առաջին տողերի հանգը: Օրինակ՝ բանաստեղծությունը տալիս է խմբերին, որ գտնեն ու ընդգծեն տողերի հանգերը՝ ելնելով վերը ասվածից:

Տաղ անձնական

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտառ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով
Եվ Կարինե Քոթանեյանին անգամ չասած մնաս բարով—
Ա՜նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

Անց եմ կենում, շուրջս—մարդիկ, շուրջս դեմքեր հազա՜ր—հազա՜ր.
Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կյանքն անհավասար.
Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ով կասի, թե ո՞ւր հասար,—
Դեմքերը, ախ, բութ են այնպես՝ կարծես շինված են տապարով:

Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի.

Ինչ-որ մեկի սրտում բացված- վերք է կարծես այս կյանքը մի.

Եվ ո՞ւմ համար- էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի

Սիրտս՝ լցված տարիների սեղմ արնիճով ու կապարով:

Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի-

Ես- հաշմանդամ ու խելագար ու հավիտյան վտարանդի՛

Դեպի երկինք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի-

Իմ բարձր, հին ու աստղային երազների ճանապարհով...

Ու էլ ամե՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.

Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս հեռուն.

Թե Կարինե Քոթանճյանին տեսնեք Կարսի փողոցներում-

Ասե՛ք նրան՝ Զարենցն ասավ- մնաս բարո՛վ, մնաս բարո՛վ...

Որից հետո տալիս ենք Կարս քաղաքի համայնապատկերը ներկայացնող նկարը:

Նկարում պատկերված է Սուրբ Առաքելոց եկեղեցին, Կարսի բերդն ու Կարս գետը, տունը՝ շինված անտաշ քարով, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով... և հանձնարարում ենք գրել 5-րոպեանոց շարադրանք (նկարագրական):

Եվ հանձնարարում ենք տնային աշխատանք. տանը կատարել հետևյալ հանձնարարությունը. Հավաքել տեղեկություններ Եղիշե Չարենցի ծննդավայրի, Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցու, Վարդանի կամուրջի, Կարինե Քոթանճյանի մասին և բանավոր ներկայացնել դասարանում:

Ուսուցիչը տնային աշխատանք հանձնարարելիս պետք է սովորողներին ներկայացնի տնային առաջադրանքը, բացատրի կատարման մեթոդները, տեղեկատվություն տա տնային առաջադրանքի կատարման ընթացքի վերաբերյալ:

Աշակերտները վերլուծում են և գնահատում սեփական աշխատանքը (ինքնագնահատում), կռահում են, թե ինչն են լավ արել և ինչի բարելավման կարիք ունեն՝ տվյալ դասի ընթացքում ձեռքբերումները մատնանշելու և բացթողումները հաջորդ դասին շտկելու նպատակով (3 րոպե):

Գրականություն

1. Սուրեն Աղբալյան, Եղիշե Չարենց, գիրք 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1973:
2. Հարություն Սուրխաթյան, Գրականության հարցեր, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1970:
3. Հարություն Սուրխաթյանի, «Գրական գոհարներ» էրեստոմատիա, Երևան, 1922:
4. «Ով ով է: Հայեր» հանրագիտարան, հատոր երկրորդ , գլխ. խմբ.Հովհաննես Այվազյան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, Երևան, 2007:
5. Ջրբաշյան Էդուարդ., Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» բանաստեղծությունը, Ե., 2003:

6. Դավիթ Գասպարյան, Ողբերգական Զարեհնցը, Ե., 1990: